ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի միջոցների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/11-02/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» մայիսի 2017թ.

Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Էդգար Տոնականյան՝ Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ),

հանձնաժողովի անդամներ՝

Էլլադա Արզաքանյան՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

Կարեն Մելքոնյան՝ ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ),

Աղավնի Բուդուլյան՝ Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ,

Սարգիս Արմենակյան՝ Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ),

հանձնաժողովի քարտուղար՝

Դավիթ Թովմասյան՝ (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄԻՄ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի մասնագետ:

1. Տեղեկատվություն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից փաստաթղթերի ներկայացման վերաբերյալ.

«Էքսպրես Շին» ՍՊԸ-ն, «Արմես Գրուպ» ՍՊԸ-ն, «Ռեաքիմ» ՍՊԸ-ն, «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն սահմանված կարգով և ժամկետում ներկայացրել են ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տեղեկատվություն՝ մասնակիցների կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի՝ Հրավերով սահմանված համապատասխան ապրանքների անվանումներին և տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ.

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 35-րդ կետի 1-ին ենթակետի գ. պարբերությամբ սահմանված՝ մասնակցի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքի անվանումն և տեխնիկական բնութագիրը հրավերով սահմանված ապրանքի անվանումին և տեխնիկական բնութագրին համապատասխանության վերաբերյալ եզրակացություն ստանալու նպատակով հանձնաժողովը 24.05.2017թ. գրությամբ դիմել է պատասխանատու ստորաբաժանմանը՝ առաջարկելով մինչև 2017թ. մայիսի 24-ը, ժամը 14:00-ն տրամադրել համապատասխան եզրակացությունը:

24.05.2017թ. պատասխանատու ստորաբաժանումը տրամադրել է համապատասխան եզրակացությունը, համաձայն որի՝ «Էքսպրես Շին» ՍՊԸ-ի, «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի, «Ռեաքիմ» ՍՊԸ-ի, «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջարկվող ապրանքների անվանումներն և տեխնիկական բնութագրերը համապատասխանում է հրավերով սահմանված համապատասխան ապրանքների անվանումներին և տեխնիկական բնութագրերին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Տեղեկատվություն՝ մասնակիցների կողմից Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերի՝ հրավերի պահանջների նկատմամբ համապատասխանության վերաբերյալ.

«Էքսպրես Շին» ՍՊԸ-ի, «Արմես Գրուպ» ՍՊԸ-ի, «Ռեաքիմ» ՍՊԸ-ի, «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված փաստաթղթերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

4. Ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետով սահմանված ՀՀ ֆինանսների նախարարության եզրակացությունը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

1-ին, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 18-րդ, 19-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Էքսպրես Շին» ՍՊԸ-ին:

2-րդ, 20-րդ, 21-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Արմես Գրուպ» ՍՊԸ-ին:

4-րդ, 16-րդ, 17-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Ռեաքիմ» ՍՊԸ-ին:

3-րդ, 8-րդ, 9-րդ, 11-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից հայտարարել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է),
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝

Է. Տոնականյան

Հանձնաժողովի անդամներ՝

Է. Արզաքանյան

Կ. Մելքոնյան

Ա. Բուդուկյան

Ս. Արմենակյան

Գնումները համակարգող՝

Դ. Թովմասյան